Հավելված N2

*Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 31-ի N218-Ն որոշման*

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ NԿՊ0047

# ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք.Երևան (կնքման վայրը) «_08_» _հունվարի_ 2018 թվական

Մատակարարը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի
(անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

Սպառողը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե աշխատակազմի ղեկավար Վ. Հասրաթյան
(անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, լիազորված լինելու դեպքում լիազորագրի տվյալները)

մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատած՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ ԷՄՕԿ), սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագրի համաձայն Մատակարարը պարտավոր է Սպառողին մատակարարել էլեկտրական էներգիա, իսկ Սպառողը՝ վճարել մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կողմերը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, ԷՄՕԿ-ով, սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով:

### 3. Մատակարարը պարտավոր է՝

1) Սպառողին մատակարարել Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակի էլեկտրական էներգիա՝ համաձայն սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված տեխնիկական պայմանների և (կամ) N2 հավելվածով սահմանված էլեկտրամատակարարման միագիծ սխեմայի.

2) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով հայտարարել նախորդ ամսվա ընթացքում Սպառողի կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված սպասարկման կետերում տեղեկատվությունը հասանելի դարձնելու օրը.

3) նախորդ ամսվա ընթացքում Սպառողի սպառած էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը տեղակայել իր հետ պայմանագիր կնքած Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, փոստային բաժանմունքների սպասարկման կետերում՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

4) ապահովել առևտրային հաշվառքի սարքի վրա Սպառողի կողմից դրված կնիքի ամբողջականությունը.

5) Սպառողի դիմումի հիման վրա ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով ստուգել Սպառողի առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը և Սպառողին ներկայացնել եզրակացություն.

6) իր միջոցների հաշվին կատարել առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր ծախսերը, բացառությամբ ԷՄՕԿ-ով նախատեսված դեպքերի.

7) ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և ժամկետում ստուգել և ճշգրտել էլեկտրոնային առևտրային հաշվիչի ժամերը, այնպես, որ դրանք ճշգրիտ հաշվառեն Հանձնաժողովի կողմից սահմանված՝ գիշերային և ցերեկային ժամերին սպառված էլեկտրաէներգիայի քանակությունները.

8) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգում իրականացնելու դեպքում այդ մասին ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում զգուշացնել Սպառողին՝ համաձայնեցնելով ստուգման ժամկետները.

9) Սպառողի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ ԷՄՕԿ-ով սահմանված դեպքերում և կարգով փոխարինել Սպառողի առևտրային հաշվառքի սարքը և համապատասխան փոփոխություն կատարել սույն պայմանագրում.

10) շուրջօրյա գործող 080000180 կամ 1-80 հեռախոսահամարով Սպառողի դիմելու դեպքում Սպառողին տրամադրել տեղեկատվություն կամ պարզաբանում վերջինիս հարցադրումների՝ ներառյալ էլեկտրամատակարարման ընդհատումների, դադարեցումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած էլեկտրական էներգիայի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, Մատակարարի և Սպառողի իրավունքների ու պարտականությունների և այլնի վերաբերյալ.

11) ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում սպառիչ կերպով պատասխանել Սպառողի բանավոր դիմումին՝ բանավոր, գրավոր դիմումին՝ գրավոր, իսկ էլեկտրոնային փոստով ստացված դիմումին՝ էլեկտրոնային փոստի միջոցով.

12) Սպառողին տեղեկացնել էլեկտրամատակարարման պլանային և արտապլանային ընդհատումների ու վերականգնման ժամկետների մասին՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում և կարգով.

13) Սպառողի դիմումի հիման վրա առևտրային (վերստուգիչ) հաշվիչի էլեկտրական էներգիայի հաշվառման և վերահսկման ավտոմատացված համակարգում վերջինիս համար բացել անձնական էջ և տրամադրել մուտքի անուն և գաղտնաբառ:

## 4. Մատակարարն իրավունք ունի՝

1) Սպառողից պահանջել վճարելու սպառած էլեկտրական էներգիայի դիմաց սույն պայմանագրով, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում.

2) Սպառողից պահանջել մատակարարված էլեկտրական էներգիան օգտագործել սույն պայմանագրի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված նշանակությամբ:

5. Սպառողը պարտավոր է՝

1) վճարել նախորդ ամսվա ընթացքում սպառած էլեկտրական էներգիայի արժեքը իր կողմից սպառված էլեկտրական էներգիայի քանակի և արժեքի մասին տեղեկատվությունը սույն պայմանագրի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետում հասանելի դառնալուց հետո՝ ԷՄՕԿ-ով սահմանված ժամկետում.

2) մատակարարվող էլեկտրական էներգիան օգտագործել ոչ կենցաղային նշանակությամբ.

3) ապահովել իր սպառման համակարգում գտնվող էլեկտրատեղակայանքների պահպանման, սպասարկման և շահագործման անվտանգությունը.

4) չխախտել Մատակարարի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի, դրա կնիքների և տեղակայման արկղի ամբողջականությունը, խախտումներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել Մատակարարին.

5) իր սեփականությունը հանդիսացող էլեկտրամատակարարվող տարածքը վաճառելու կամ այլ կերպ օտարելու դեպքում դիմել Մատակարարին՝ վերջնահաշվարկ կատարելու, էլեկտրամատակարարումը դադարեցնելու և պայմանագիրը լուծելու համար, ինչի վերաբերյալ Մատակարարը տեղեկանք է տալիս Սպառողին:

6. Սպառողն իրավունք ունի՝

1) կնքել առևտրային հաշվառքի սարքը, դիմել Մատակարարին առևտրային հաշվառքի սարքի ճշտությունը ստուգելու համար, մասնակցել դրա աշխատանքի ճշտության ստուգման հետ կապված բոլոր աշխատանքներին, այդ թվում նաև՝ ստուգաչափմանը, ԷՄՕԿ-ով սահմանված կարգով առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը պատվիրել նման իրավասություն ունեցող այլ կազմակերպությունների.

2) դիմել Մատակարարին իր առևտրային հաշվառքի սարքը փոխարինելու համար.

3) դիմել Մատակարարին՝ մասնակցելու առևտրային (վերստուգիչ) հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով:

## 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը, բացառությամբ սույն պայմանագրի 8-րդ կետով նախատեսված դեպքի, որոշվում է հաշվարկային ամսում Սպառողի առևտրային հաշվառքի սարքի (N3 հավելված) գրանցած ցուցմունքների տարբերությամբ կամ այդ տարբերությունը չափիչ տրանսֆորմատորների տրանսֆորմացիայի գործակիցների արտադրյալով բազմապատկելու միջոցով:

8. Եթե առևտրային հաշվառքի սարքն անմիջապես գրանցում է հաշվարկային ժամանակահատվածում ծախսված էլեկտրական էներգիայի քանակը, ապա որպես հաշվարկային ամսվա ընթացքում սպառված՝ ընդունվում է էլեկտրական էներգիայի այդ քանակը:

9. Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է Մատակարարը՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգով և ժամկետում:

10. Առևտրային հաշվառքի սարքի խախտման (էլեկտրական էներգիայի քանակության սխալ գրանցման) դեպքում սպառված էլեկտրական էներգիայի քանակությունը որոշվում է հաշվարկային եղանակով՝ համաձայն ԷՄՕԿ-ի պահանջների:

11. Հաշվարկային ամսվա ընթացքում սպառողի սպառած էլեկտրական էներգիայի արժեքը որոշվում է Հանձնաժողովի կողմից սահմանված սակագների և սպառված էլեկտրական էներգիայի քանակության արտադրյալով: Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 20.02.2015թ. կնքված N 5348 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «15» հոկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հարությունի (այսուհետ՝ «Բաժանորդ»), մի կողմից, և «Քրոսսնեթ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Ալեքսանյանի (այսուհետ՝ «Օպերատոր»), մյուս կողմից, հիմք ընդունելով 20.02.2015թ. կնքված N 5348 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.4 կետով սահմանված պահանջները՝ խմբագրել Պայմանագրի թիվ 1 Հավելվածը համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջերից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Բաժանորդ**

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
ք.Երևան, Արշակունյաց7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար ____________ Վ.Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ.

**Օպերատոր**

«ՔՐՈՍՍՆԵԹ» ՍՊԸ
Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.
Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 7, բն. 3
ՀՎՀՀ՝ 01834381
Հ/Հ՝ 16048097516001
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ ____________ Վ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված

20.02.2015թ. կնքված N 5348 պայմանագրի թիվ 1 Համաձայնագրի

## Հեռախոսային ծառայությունների մատուցման

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է վճարել 2015թ.-ին | | | | | | | | | | | Ընդամենը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Հեռախոսային ծառայություններ | 4500.0 | 4500.0 | 9000.0 | 9550.0 | 10100.0 | 10650.0 | 11200.0 | 11750.0 | 11800.0 | 11800.0 | 11800.0 | 11800.0 |

*գումարը ներկայացված է աճողական կարգով:

**Բաժանորդ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
ք.Երևան, Արշակունյաց 7
h/h 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար ______________ Վ.Հասրաթյան
/ստորագրություն/ Կ.Տ.

**Օպերատոր**

«ՔՐՈՍՍՆԵԹ» ՍՊԸ
Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.
Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 7, բն. 3
ՀՎՀՀ՝ 01834381
Հ/Հ՝ 16048097516001
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ ______________ Կ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

*Հավելված N1*
*N 5348 հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի*

Հեռախոսային ծառայությունների մատուցման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է վճարել 2015թ.-ին | | | | | | | | | | | Ընդամենը /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Հեռախոսային ծառայություններ | 4500.0 | 4500.0 | 9000.0 | 9550.0 | 10100.0 | 10650.0 | 11200.0 | 11750.0 | 12300.0 | 12800.0 | 12800.0 | 12800.0 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴ՝ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

Աշխատակազմի ղեկավար՝ ____________ Վ.Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ.

ՕՊԵՐԱՏՈՐ՝ «ՔՐՈՍՄՆԵԹ» ՍՊԸ

Տնօրեն՝ ____________ Վ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

*Հավելված N2*

*N 5348 հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի*

| Օպերատոր | Բաժանորդ |
|---|---|
| «ՔՐՈՍՍՆԵԹ» ՍՊԸ | ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 28 | Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7 |
| Բանկը՝«Կոնվերսբանկ» ՓԲԸ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ՝ 1930032490780100 | Հ/Հ՝ 900013220026 |
| ՀՎՀՀ՝ 01834381 | ՀՎՀՀ՝ 02534328 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ...
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«...» «......» 201 թ.

Պայմանագրի անվանումը՝ Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «...» «......» 201 թ.

Պայմանագրի համարը՝ N ...

Բաժանորդը՝ ի դեմս -ի, և Օպերատորը՝ ի դեմս տնօրեն Վ. Ալեքսանյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Օպերատորը __ ________ 201 թ.-ից __ ________ 201 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայությունները.

| Կատարված ծառայությունների անվանումը | Կատարված ծառայությունների քանակական ցուցանիշները | Ծառայությունների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը՝ | ------------- | ------------- | | ----------- |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը:

| Հանձնեց | Ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր 20.02.2015թ. N 5348

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված 3

Կողմերը՝

**Օպերատոր՝**

«ՔՐՈՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն. Վ.Ալեքսանյան

Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.

Հասցե՝ ք.Երեւան, Կորյունի 7, գր. 3

Հեռ՝ 374 60 370000

Ֆաքս՝ 374 60 370001

ՀՎՀՀ՝ 01834381

Հ/Հ՝ 16048097516001

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

եւ

**Բաժանորդը՝**

Անվանում՝ ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե

Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հասրաթյան

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7

Հեռ՝

Էլ-փոստ՝ 'gnumnercadastre@mail.ru

ՀՎՀՀ՝ 02534328

Հ/Հ՝ 900013220026

Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ստորագրում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի սույն Հատուկ պայմանները հետեւյալի մասին.

1. Սույն Հատուկ պայմանները եւ կցվող՝ Օպերատորի տնօրենի 01 մարտի 2011թ թիվ 002 Հրամանով հաստատված եւ Բաժանորդի կողմից ստորագրված Հիմնական պայմանները միասին վերցված կազմավորում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքված Օպերատորի եւ Բաժանորդի միջեւ:
2. Հատուկ պայմանների «Ծառայությունների նկարագիր» մասով սահմանվում են Բաժանորդին մատուցվող հիմնական եւ լրացուցիչ հեռախոսային ծառայությունները, դրանց համար Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա ծառայության վճարները.
3. Հատուկ պայմանները ստորագրվում են երկու օրինակից:
4. Սույնով Բաժանորդը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ծանոթացել է եւ ստորագրել է «Հիմնական պայմանները», ընդունում է դրանք, տեղյակ է բաժանորդի իրավունքներին եւ պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին եւ խախտումների հետեւանքներին:
5. Բաժանորդը հնարավորություն ունի ստուգել նախորդ ամսվա պարտքի չափը www.cross.am վեբ կայքի միջոցով:

Ծառայությունների նկարագիր

Միանվագ ծառայություններ

| Ծառայության անվանումը | Հեռախոսի տեղադրում |
|---|---|
| Չափման միավորը | Հատ |
| Քանակը | 175 |
| Ընդամենը տեղակայման և շահագործման միանվագ ծառայություն (ՀՀ դրամ) | 7474000 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

Հեռախոսահամարներ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 474100 | 474101 | 474102 | 474103 | 474104 | 474105 | 474106 | 474107 | 474108 | 474109 |
| 474110 | 474111 | 474112 | 474113 | 474114 | 474115 | 474116 | 474117 | 474118 | 474119 |
| 474120 | 474121 | 474122 | 474123 | 474124 | 474125 | 474126 | 474127 | 474128 | 474129 |
| 474130 | 474131 | 474132 | 474133 | 474134 | 474135 | 474136 | 474137 | 474138 | 474139 |
| 474140 | 474141 | 474142 | 474143 | 474144 | 474145 | 474146 | 474147 | 474148 | 474149 |
| 474150 | 474151 | 474152 | 474153 | 474154 | 474155 | 474156 | 474157 | 474158 | 474159 |
| 474160 | 474161 | 474162 | 474163 | 474164 | 474165 | 474166 | 474167 | 474168 | 474169 |
| 474170 | 474171 | 474172 | 474173 | 474174 | 474175 | 474176 | 474177 | 474178 | 474179 |
| 474180 | 474181 | 474182 | 474183 | 474184 | 474185 | 474186 | 474187 | 474188 | 474189 |
| 474190 | 474191 | 474192 | 474193 | 474194 | 474195 | 474196 | 474197 | 474198 | 474199 |
| 474200 | 474201 | 474202 | 474203 | 474204 | 474205 | 474206 | 474207 | 474208 | 474209 |
| 474210 | 474211 | 474212 | 474213 | 474214 | 474215 | 474216 | 474217 | 474218 | 474219 |
| 474220 | 474221 | 474222 | 474223 | 474224 | 474225 | 474226 | 474227 | 474228 | 474229 |
| 474230 | 474231 | 474232 | 474233 | 474234 | 474235 | 474236 | 474237 | 474238 | 474239 |
| 474240 | 474241 | 474242 | 474243 | 474244 | 474245 | 474246 | 474247 | 474248 | 474249 |
| 474250 | 474251 | 474252 | 474253 | 474254 | 474255 | 474256 | 474257 | 474258 | 474259 |
| 474260 | 474261 | 474262 | 474263 | 474264 | 474265 | 474266 | 474267 | 474268 | 474269 |
| 474270 | 474271 | 474272 | 474273 | 474274 | | | | | |

Նշված հեռախոսահամարները 060 ոչ աշխարհագրական կոդով են:

| Տ / Պ | Քանակ | Ամսական վարձ յուրաքանչյուր հեռ-ի համար | Ընդամենը |
|---|---|---|---|
| Փաթեթ | հատ | ՀՀ դրամ | ՀՀ դրամ |
| Ի-1 | 175 | 3000 | 525000 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ

Տնօրեն Վ.Ալեքսանյան

Կ.Տ.

ԲԱԺԱՆՈՐԴ

Աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյան

Կ.Տ.

Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր 01.11.2016թ. N 5348

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված 4

Կողմերը՝

**Օպերատոր՝**

«ՔՐՈՍՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն. Վ.Ալեքսանյան
Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.
Հասցե՝ ք.Երեւան, Կորյունի 7, գր. 3
Հեռ՝ 374 60 370000
Ֆաքս՝ 374 60 370001
ՀՎՀՀ՝ 01834381
Հ/Հ՝ 16048097516001
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

եւ

**Բաժանորդը՝**

Անվանում՝ ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Հարությունյան
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7
Հեռ՝
Էլ-փոստ՝'gnumnercadastre@mail.ru
ՀՎՀՀ ՝ 02534328
Հ/Հ՝ 900013220026
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ստորագրում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի սույն Հատուկ պայմանները հետեւյալի մասին.

1. Սույն Հատուկ պայմանները եւ կցվող՝ Օպերատորի տնօրենի 01 մարտի 2011թ թիվ 002 Հրամանով հաստատված եւ Բաժանորդի կողմից ստորագրված Հիմնական պայմանները միասին վերցված կազմավորում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքված Օպերատորի եւ Բաժանորդի միջեւ:
2. Հատուկ պայմանների «Ծառայությունների նկարագիր» մասով սահմանվում են Բաժանորդին մատուցվող հիմնական եւ լրացուցիչ հեռախոսային ծառայությունները, դրանց համար Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա ծառայության վճարները.
3. Հատուկ պայմանները ստորագրվում են երկու օրինակից:
4. Սույնով Բաժանորդը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ծանոթացել է եւ ստորագրել է «Հիմնական պայմանները», ընդունում է դրանք, տեղյակ է բաժանորդի իրավունքներին եւ պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին եւ խախտումների հետեւանքներին:
5. Բաժանորդը հնարավորություն ունի ստուգել նախորդ ամսվա պարտքի չափը www.cross.am վեբ կայքի միջոցով:

Ծառայությունների նկարագիր
Միանվագ ծառայություններ

| Ծառայության անվանումը | Հեռախոսի տեղադրում |
|---|---|
| Չափման միավորը | Հատ |
| Քանակը | 168 |
| Ընդամենը տեղակայման և շահագործման միանվագ ծառայություն (ՀՀ դրամ) | 0 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

Հեռախոսահամարներ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 474100 | 474101 | 474102 | 474103 | 474104 | 474105 | 474106 | 474107 | 474108 | 474109 |
| 474110 | 474111 | 474112 | 474113 | 474114 | 474115 | 474116 | 474117 | 474118 | 474119 |
| 474120 | 474121 | 474122 | 474123 | 474124 | 474125 | 474126 | 474127 | 474128 | 474129 |
| 474130 | 474131 | 474132 | 474133 | 474134 | 474135 | 474136 | 474137 | 474138 | 474139 |
| 474140 | 474141 | 474142 | 474143 | 474144 | 474145 | 474146 | 474147 | 474148 | 474149 |
| 474150 | 474151 | 474152 | 474153 | 474154 | 474155 | 474156 | 474157 | 474158 | 474159 |
| 474160 | 474161 | 474162 | 474163 | 474164 | 474165 | 474166 | 474167 | 474168 | 474169 |
| 474170 | 474171 | 474172 | 474173 | 474174 | 474175 | 474176 | 474177 | 474178 | 474179 |
| 474180 | 474181 | 474182 | 474183 | 474184 | 474185 | 474186 | 474187 | 474188 | 474189 |
| 474190 | 474191 | 474192 | 474193 | 474194 | 474195 | 474196 | 474198 | 474199 | 474200 |
| 474201 | 474202 | 474203 | 474204 | 474205 | 474206 | 474207 | 474209 | 474210 | 474211 |
| 474212 | 474213 | 474214 | 474215 | 474216 | 474217 | 474218 | 474219 | 474220 | 474221 |
| 474222 | 474223 | 474224 | 474225 | 474226 | 474227 | 474228 | 474229 | 474230 | 474231 |
| 474232 | 474233 | 474234 | 474235 | 474236 | 474237 | 474238 | 474239 | 474240 | 474241 |
| 474242 | 474243 | 474244 | 474245 | 474246 | 474247 | 474248 | 474249 | 474250 | 474251 |
| 474252 | 474253 | 474254 | 474259 | 474260 | 474261 | 474262 | 474263 | 474265 | 474266 |
| 474267 | 474268 | 474269 | 474270 | 474271 | 474272 | 474273 | 474274 | | |

Նշված հեռախոսահամարները 060 ոչ աշխարհագրական կոդով են:

| Տ / Պ | Քանակ | Ամսական վարձ յուրաքանչյուր հեռ-ի համար | Ընդամենը |
|---|---|---|---|
| Փաթեթ | հատ | ՀՀ դրամ | ՀՀ դրամ |
| Ի-1 | 168 | 3000 | 504000 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

**ՕՊԵՐԱՏՈՐ**

Տնօրեն՝ ________ Վ.Ալեքսանյան
Կ.Տ.

**ԲԱԺԱՆՈՐԴ**

Աշխատակազմի ղեկավար ________ Վ.Հարությունյան
Կ.Տ.

Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր 01.12.2018 թ. N 5348

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված 10

Կողմերը՝

**Օպերատոր՝**

«ՔՐՈՍՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն. Վ.Ալեքսանյան

Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.

Հասցե՝ ք.Երեւան, Կորյունի 7, գր. 3

Հեռ՝ 374 60 370000

Ֆաքս՝ 374 60 370001

ՀՎՀՀ՝ 01834381

Հ/Հ՝ 16048097516001

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

եւ

**Բաժանորդը՝**

Անվանում՝ ՀՀ ԱԳԿ կոմիտե

Գլխավոր քարտուղար՝ Գ. Գրիգորյան

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7

Հեռ՝

Էլ-փոստ՝gnumner@cadastre.am

ՀՎՀՀ ՝ 02534328

Հ/Հ՝ 900013220026

Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ստորագրում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի սույն Հատուկ պայմանները հետեւյալի մասին.

1. Սույն Հատուկ պայմանները եւ կցվող՝ Օպերատորի տնօրենի 01 մարտի 2011թ թիվ 002 Հրամանով հաստատված եւ Բաժանորդի կողմից ստորագրված Հիմնական պայմանները միասին վերցված կազմավորում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքված Օպերատորի եւ Բաժանորդի միջեւ:
2. Հատուկ պայմանների «Ծառայությունների նկարագիր» մասով սահմանվում են Բաժանորդին մատուցվող հիմնական եւ լրացուցիչ հեռախոսային ծառայությունները, դրանց համար Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա ծառայության վճարները.
3. Հատուկ պայմանները ստորագրվում են երկու օրինակից:
4. Սույնով Բաժանորդը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ծանոթացել է եւ ստորագրել է «Հիմնական պայմանները», ընդունում է դրանք, տեղյակ է բաժանորդի իրավունքներին եւ պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին եւ խախտումների հետեւանքներին:
5. Բաժանորդը հնարավորություն ունի ստուգել նախորդ ամսվա պարտքի չափը www.cross.am վեբ կայքի միջոցով:

Ծառայությունների նկարագիր

Միանվագ ծառայություններ

| | |
|---|---|
| Ծառայության անվանումը | Հեռախոսահամարի տրամադրում |
| Չափման միավորը | Հատ |
| Քանակը | 1 |
| Ընդամենը տեղակայման և շահագործման միանվագ ծառայություն (ՀՀ դրամ) | 0 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

Հեռախոսահամարներ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 474100 | 474101 | 474102 | 474103 | 474104 | 474105 | 474106 | 474107 | 474108 | 474109 |
| 474110 | 474111 | 474112 | 474113 | 474114 | 474115 | 474116 | 474117 | 474118 | 474119 |
| 474120 | 474121 | 474122 | 474123 | 474124 | 474125 | 474126 | 474127 | 474128 | 474129 |
| 474130 | 474131 | 474132 | 474133 | 474134 | 474135 | 474136 | 474137 | 474138 | 474139 |
| 474140 | 474141 | 474142 | 474143 | 474144 | 474145 | 474146 | 474147 | 474148 | 474149 |
| 474150 | 474151 | 474152 | 474153 | 474154 | 474155 | 474156 | 474157 | 474158 | 474159 |
| 474160 | 474161 | 474162 | 474163 | 474164 | 474165 | 474166 | 474167 | 474168 | 474169 |
| 474267 | 474268 | 474262 | 474263 | 474265 | 474266 | 474176 | 474177 | 474178 | 474179 |
| 474180 | 474270 | 474271 | 474272 | 474273 | 474274 | 474186 | 474269 | 474188 | 474189 |
| 474190 | 474191 | 474192 | 474193 | 474194 | 474195 | 474196 | 474198 | 474199 | 474200 |
| 474201 | 474202 | 474203 | 474204 | 474205 | 474206 | 474207 | 474209 | 474210 | 474211 |
| 474212 | 474213 | 474214 | 474215 | 474216 | 474217 | 474218 | 474219 | 474220 | 474221 |
| 474222 | 474223 | 474224 | 474225 | 474226 | 474227 | 474228 | 474229 | 474230 | 474231 |
| 474232 | 474233 | 474234 | 474235 | 474236 | 474237 | 474238 | 474239 | 474240 | 474241 |
| 474242 | 474243 | 474244 | 474245 | 474246 | 474247 | 474248 | 474249 | 474250 | 474251 |
| 474252 | 474253 | 474254 | 474259 | 474260 | 474261 | 474171 | | | |
| | | | | | | | | | |

Նշված հեռախոսահամարները 060 ոչ աշխարհագրական կոդով են:

| Տ/Պ | Քանակ | Ամսական վարձ յուրաքանչյուր հեռ-ի համար | Ընդամենը |
|---|---|---|---|
| Փաթեթ | հատ | ՀՀ դրամ | ՀՀ դրամ |
| Ի-4 | 157 | 120 | 18840 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

**ՕՊԵՐԱՏՈՐ**

Տնօրեն ____ Վ.Ալեքսանյան

Կ.Տ.

**ԲԱԺԱՆՈՐԴ**

Գլխավոր քարտուղար ____ Գ. Գրիգորյան

Կ.Տ.

ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավելված 10

Կողմերը՝

**Օպերատոր՝**

«ՔՐՈՍՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն. Վ.Ալեքսանյան

Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.

Հասցե՝ ք.Երևան, Կորյունի 7, գր. 3

Հեռ՝ 374 60 370000

Ֆաքս՝ 374 60 370001

ՀՎՀՀ՝ 01834381

Հ/Հ՝ 16048097516001

Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

**և**

**Բաժանորդը՝**

Անվանում՝ ՀՀ ԱԳԿ կոմիտե

Գլխավոր քարտուղար՝ Գ. Գրիգորյան

Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7

Հեռ՝

Էլ-փոստ՝ gnumner@cadastre.am

ՀՎՀՀ՝ 02534328

Հ/Հ՝ 900013220026

Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ստորագրում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագրի սույն Հատուկ պայմանները հետևյալի մասին.

1. Սույն Հատուկ պայմանները և կցվող՝ Օպերատորի տնօրենի 01 մարտի 2011թ թիվ 002 Հրամանով հաստատված և Բաժանորդի կողմից ստորագրված Հիմնական պայմանները միասին վերցված կազմավորում են Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կնքված Օպերատորի և Բաժանորդի միջև:
2. Հատուկ պայմանների «Ծառայությունների նկարագիր» մասով սահմանվում են Բաժանորդին մատուցվող հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայությունները, դրանց համար Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա ծառայության վճարները.
3. Հատուկ պայմանները ստորագրվում են երկու օրինակից:
4. Սույնով Բաժանորդը հավաստիացնում է, որ ամբողջությամբ ծանոթացել է և ստորագրել է «Հիմնական պայմանները», ընդունում է դրանք, տեղյակ է բաժանորդի իրավունքներին և պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին և խախտումների հետևանքներին:
5. Բաժանորդը հնարավորություն ունի ստուգել նախորդ ամսվա պարտքի չափը www.cross.am վեբ կայքի միջոցով:

Ծառայությունների նկարագիր

Միանվագ ծառայություններ

| | |
|---|---|
| Ծառայության անվանումը | |
| Չափման միավորը | |
| Քանակը | |
| Ընդամենը տեղակայման և շահագործման միանվագ ծառայություն (ՀՀ դրամ) | |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

Հեռախոսահամարներ՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 474100 | 474101 | 474102 | 474103 | 474104 | 474105 | 474106 | 474107 | 474108 | 474109 |
| 474110 | 474111 | 474112 | 474113 | 474114 | 474115 | 474116 | 474117 | 474118 | 474119 |
| 474120 | 474121 | 474122 | 474123 | 474124 | 474125 | 474126 | 474127 | 474128 | 474129 |
| 474130 | 474131 | 474132 | 474133 | 474134 | 474135 | 474136 | 474137 | 474138 | 474139 |
| 474140 | 474141 | 474142 | 474143 | 474144 | 474145 | 474146 | 474147 | 474148 | 474149 |
| 474150 | 474151 | 474152 | 474153 | 474154 | 474155 | 474156 | 474157 | 474158 | 474159 |
| 474160 | 474161 | 474162 | 474163 | 474164 | 474165 | 474166 | 474167 | 474168 | 474169 |
| 474267 | 474268 | 474254 | 474259 | 474265 | 474266 | 474176 | 474177 | 474178 | 474179 |
| 474180 | 474270 | 474271 | 474272 | 474273 | 474274 | 474186 | 474269 | 474188 | 474189 |
| 474190 | 474191 | 474192 | 474193 | 474194 | 474195 | 474196 | 474198 | 474199 | 474200 |
| 474201 | 474202 | 474203 | 474204 | 474205 | 474206 | 474207 | 474209 | 474210 | 474211 |
| 474212 | 474213 | 474214 | 474215 | 474216 | 474217 | 474218 | 474219 | 474220 | 474221 |
| 474222 | 474223 | 474224 | 474225 | 474226 | 474227 | 474228 | 474229 | 474230 | 474231 |
| 474232 | 474233 | 474234 | 474235 | 474236 | 474237 | 474238 | 474239 | 474240 | 474241 |
| 474242 | 474243 | 474244 | 474245 | 474246 | 474247 | 474248 | 474249 | 474250 | 474251 |
| 474252 | 474253 | | | | | | | | |
| | | | | | | | | | |

Նշված հեռախոսահամարները 060 ոչ աշխարհագրական կոդով են:

| Տ/Պ | Քանակ | Ամսական վարձ յուրաքանչյուր հեռ-ի համար | Ընդամենը |
|---|---|---|---|
| Փաթեթ | հատ | ՀՀ դրամ | ՀՀ դրամ |
| Ի-4 | 152 | 120 | 18240 |

Գները ներառում են ԱԱՀ-ն:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

ՕՊԵՐԱՏՈՐ

Տնօրեն՝ ________ Վ.Ալեքսանյան

Կ.Տ.

«ՔՐՈՍՍՆԵԹ» ՍՊԸ «CROSSNET» LLC «КРОССНЕТ» ООО ՀՎՀՀ 01834381

ԲԱԺԱՆՈՐԴ

Գլխավոր քարտուղար՝ ________ Գ.Գրիգորյան

Կ.Տ.

Հաստատված է «ՔՐՈՍՄՆԵԹ» ՍՊԸ տնօրենի
01 մարտի 2011թ թիվ 002 հրամանով

Պայմանագիր № 5348

ք.Երևան

<<20 >> փետրվար 2015թ.

**«ՔՐՈՍՄՆԵԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**
**Լիցենզիա՝** № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.
**Հասցե՝** ք.Երևան, Կորյունի 7, բն. 3
**ՀՎՀՀ՝** 01834381
**Հ/Հ՝** 16048097516001
**Բանկ՝** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

**ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ**
**պետական կառավարչական հիմնարկ**
Հասցե՝ք.Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900013220026
ՀՎՀՀ ՝02534328

# Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր

## ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիրը կազմված է ստորև բերվող պայմաններից (այսուհետ՝ **Հիմնական պայմաններ**) և Հատուկ պայմաններից: Ստորև բերվող Հիմնական պայմանները կարգավորվում են «Քրոսնեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ **Օպերատոր**) կողմից, ներառյալ բոլոր իրավահաջորդների և լիազորված անձանց կողմից Բաժանորդին հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայությունների մատուցման հետ կապված իրավահարաբերությունները:

### Հիմնական հասկացություններ

**Հեռախոսային ծառայությունների մատուցման պայմանագիր (Պայմանագիր)**՝ Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված՝ հեռախոսային ծառայություններ մատուցելու պայմանները, նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանող փաստաթուղթ, որը կազմված է Հիմնական և Հատուկ պայմաններից.
**Բաժանորդ**՝ Հատուկ պայմաններում նշված ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը Պայմանագրի հիման վրա օգտվում է Օպերատորի մատուցած հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայություններից
**Կանոններ**՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ ՀԾԿՀ) կողմից 20.05.2008թ. թիվ 272-Ն որոշմամբ հաստատված Հեռախոսային ծառայությունների մատուցման և այդ ծառայություններից օգտվելու կանոնները.
**հիմնական հեռախոսային ծառայություններ**՝
1) հեռախոսի տեղադրման (հեռախոսացանցին միացման) ծառայությունը.
2) տեղական, միջքաղաքային և միջազգային հեռախոսային ծառայությունները.
**լրացուցիչ հեռախոսային ծառայություններ**՝ Կանոններով սահմանված անվճար և բաժանորդի ցանկությամբ Հատուկ պայմաններով սահմանված անվճար և վճարովի ծառայություններ.
**հաշվարկային ժամանակաշրջան**՝ օրացուցային ամիս, որի ընթացքում մատուցվել են հեռախոսային ծառայությունները.
**անջատում**՝ հիմնական հեռախոսային ծառայությունների սահմանափակում կամ կասեցում, ինչպես դա սահմանվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի և Կանոնների դրույթներով.
**հեռախոսացանց**՝ տեխնոլոգիական շինությունների, սարքավորումների, մայրուղային, բաշխիչ ցանցերի մալուխային (ստորգետնյա կամ օդային) գծերի, ռադիոներթափանցման սարքավորումների ամբողջություն, որոնք հիմնականում նախատեսված են հեռախոսային ծառայությունների մատուցման համար.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Բաժանորդը հանձնարարում է, իսկ Օպերատորը պարտավորվում է իր հեռախոսային ցանցի

միջոցով Բաժանորդին մատուցել հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայություններ, իսկ Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել մատուցված հեռախոսային ծառայությունների համար:

1.2. Բաժանորդին մատուցվող հիմնական և լրացուցիչ հեռախոսային ծառայությունները թվարկվում են սույն Պայմանագրի Հատուկ պայմաններում:

## 2. Վճարման կարգը և ժամկետները

2.1. Բաժանորդին հեռախոսային ծառայությունները մատուցվում են համաձայն Պայմանագրի Հատուկ պայմաններում նշված տեսակների և սահմանված համապատասխան սակագների:

2.2. Մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է համաձայն Օպերատորի կողմից ներկայացվող հանձման-ընդունման արձանագրության (Հավելված N2) և հաշիվ-ապրանքագրերի: Հաշիվ-ապրանքագրերում ներառվող մատուցված ծառայությունների ծավալը որոշվում է Օպերատորի բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա, որոնք արտացոլում են հաշվարկային ժամանակաշրջանում փաստացի տեղի ունեցած կապի սեանսների տևողությունը՝ դրամական համարժեք արտահայտմամբ: Բաժանորդն ընդունում է, որ Օպերատորի Բիլինգային համակարգի նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են Բաժանորդին մատուցվող հեռախոսային ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց, և որ ծառայությունների մատուցման փաստը և ծառայությունների ծավալը լրացուցիչ ապացուցման ենթակա չեն:

2.3. Բաժանորդն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (Հավելված N2) հիման վրա N1 հավելվածի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

2.4. Մատուցված հեռախոսային ծառայությունների հաշիվները ուղարկում են Բաժանորդին՝ հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5-րդ օրից սկսած, բայց ոչ ուշ, քան 15-ը: Օպերատորի կողմից մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները Բաժանորդը պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 22-րդ օրը:

2.5. Բաժանորդը սույնով համարվում է տեղեկացված, որ Հատուկ պայմաններով սահմանված հեռախոսային ծառայությունների սակագները կարող են փոփոխվել: Օպերատորը սակագների փոփոխությունների մասին Բաժանորդին տեղեկացնում է ոչ ուշ, քան նոր սակագների ներդրումից 30 օր առաջ, բացառությամբ սակագների նվազեցման դեպքերի: Հեռախոսային ծառայությունների սակագնի յուրաքանչյուր նվազեցման մասին ծառայություններ մատուցողը պարտավոր է Բաժանորդին տեղեկացնել ոչ ուշ, քան այն կիրառելու օրվանից երեք օր առաջ: Սույն կետի իմաստով տեղեկացումը համարվում է պատշաճ, եթե այն կատարվել է գրավոր՝ Պայմանագրի պահանջներին համապատասխան: Կողմերը համաձայն են, որ նոր սակագների ներդրման դեպքում նոր պայմանագրեր առանձին չեն ստորագրվում: Սակագների փոփոխության դեպքում Օպերատորն այդ մասին տեղեկացնում է Բաժանորդին: Եթե բաժանորդը համաձայն չէ նոր սակագների հետ, ապա այդ մասին գրավոր տեղեկացնում է Օպերատորին և պայմանագիրը կհամարվի լուծված:

## 3. Օպերատորի պարտականությունները և իրավունքները

3.1. Օպերատորը պարտավոր է՝

3.1.1. Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսային ծառայություններ:

3.1.2. Իր ցանցի սահմաններում երաշխավորել անվտանգությունը և ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը, ինչպես նաև տրամադրված սարքավորումների երաշխիքային սպասարկման շրջանակներում փոխհատուցել դրանց անվտանգության պատշաճ որակի չպահպանման հետևանքով Բաժանորդի կրած ծախսերը:

3.1.3. Կազմակերպել անսարքությունների վերաբերյալ Բաժանորդից տեղեկությունների ստացումը և ողջամիտ ժամանակահատվածում վերացնել այդպիսի թերությունները:

**3.1.4.** Ոչ Բաժանորդի մեղքով ծառայությունների ընդհատման դեպքում ընդհատման պատճառի վերացումից հետո երկու օրվա ընթացքում վերականգնել Բաժանորդին մատուցվող ծառայությունը:
**3.1.5.** Վերսկսել հեռախոսային ծառայությունների մատուցումը սահմանափակման կամ կասեցման հիմքերը վերանալուց հետո ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, բացառությամբ Հիմնական պայմանների 3.2.3. կետով նշված ժամկետի լրանալու պարագայում ընդհանուր հիմունքներով նոր տեղադրում իրականացնելու դեպքի:
**3.1.6.** Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Բաժանորդին:
**3.2.** Օպերատորն իրավունք ունի՝
**3.2.1.** Անջատել Բաժանորդային հեռախոսակապը, եթե՝
ա) Բաժանորդը ժամանակին չի վճարել մատուցված ծառայությունների դիմաց.
բ) Բաժանորդը հեռախոսացանցին միացրել է չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորումներ.
գ) Բաժանորդը հեռախոսացանցին միացրել է այնպիսի վերջնակետային սարքավորումներ, որոնք համատեղելի չեն կամ միջամտում են հեռախոսացանցի աշխատանքին կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը.
դ) Անջատումը՝ սահմանափակումը կամ կասեցումն անհրաժեշտ է սարքավորումների կամ գծի ենթակառուցվածքների տեղադրման, վերանորոգման, փոխարինման կամ պահպանման համար.
ե) Բաժանորդը խախտում է Օպերատորի ներկայացրած սակագնի պայմանները կամ Պայմանագիրը.
զ) Օպերատորը հայտնաբերում է, որ Բաժանորդը ոչ ճիշտ տվյալներ է ներկայացրել տվյալ ծառայությունների համար դիմելիս, և այդ տվյալները կարող են վնասակար լինել.
է) Օպերատորի և Բաժանորդի միջև համաձայնեցված ծառայությունների մատուցման ժամկետն ավարտվել է:
**3.2.2.** Մատուցված հեռախոսային ծառայությունների դիմաց Հիմնական պայմանների 2.3 կետով նախատեսված ժամկետում Բաժանորդի կողմից անհրաժեշտ վճարումներ չկատարվելու դեպքում սահմանափակել Բաժանորդի կողմից ելքային զանգեր կատարելու հնարավորությունը՝ բացառությամբ ոստիկանություն, շտապ բուժօգնություն, հրշեջ և փրկարարական ծառայություններ, օպերատիվ արձագանքման կենտրոն, ինչպես նաև Օպերատորին զանգահարելու հնարավորության՝ նրան ընձեռելով միայն մուտքային զանգեր ստանալու հնարավորություն: Մինչև հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 31-ը ներառյալ Բաժանորդի վճարումները չստանալու դեպքում Օպերատորն իրավունք ունի ժամանակավորապես երկկողմանի անջատել հեռախոսակապը (այսինքն՝ կասեցնել մուտքային զանգեր ստանալու և ելքային զանգեր կատարելու հնարավորությունը): Անջատման օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում եթե Բաժանորդը կրկին չի կատարում իր վճարումները, Օպերատորն իրավունք ունի տվյալ ամսվա վերջին օրը միակողմանիորեն ժամանակավորապես կասեցնել սույն Պայմանագիրը՝ 6 ամիս ժամկետով: Այդ ժամանակահատվածում Բաժանորդի կողմից վճարումներ չկատարվելու դեպքում Օպերատորն իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը և կատարել օրենսդրությամբ չարգելված բոլոր գործողությունները պարտքերի բռնագանձման և Բաժանորդին տրամադրված սարքավորումները հետ ստանալու ուղղությամբ, այդ թվում՝ դատական կարգով:
**3.2.3.** Սույն Պայմանագրի լուծման օրվանից վեց ամիս անց Օպերատորն իրավունք ունի սույն Պայմանագրով Բաժանորդին տրամադրված հեռախոսահամարը տրամադրել մեկ այլ բաժանորդի:
**3.2.4.** Հեռախոսահամարի հանման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում, Բաժանորդի կողմից պարտքերը չմարելու և վերականգնման միանվագ ծառայության վարձը չվճարելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու դեպքում:
**3.2.5.** Մինչև Պայմանագրով հեռախոսային ծառայությունների մատուցման դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:
**3.2.6.** Անմիջապես, առանց ծանուցման անջատել Բաժանորդի հեռախոսահամարը և /կամ/ դադարեցնել հեռախոսային ծառայությունների մատուցումը, եթե Բաժանորդը խախտել է սույն Հիմնական պայմանների 3.2.1. կետի «բ» և «գ» ենթակետերի պահանջները: Ընդ որում՝ Հիմնական պայմանների 5.6 կետում նշված պահանջի խախտումը կողմերը դիտարկում են որպես Հիմնական պայմանների 3.2.1. կետի «գ» ենթակետի խախտում:
**3.2.7.** Կանոններով սահմանված կարգով, հեռախոսացանցի միջոցով տեղեկացնելով Բաժանորդին իրականացնել Հիմնական պայմանների 3.2.1. կետի «ա», «դ», «ե», «զ» և «է» ենթակետերում բերվող հիմքերով անջատումները:

### 4. Բաժանորդի պարտականությունները և իրավունքները

4.1. Բաժանորդը պարտավոր է՝

4.1.1. Մատուցված հեռախոսային ծառայությունների համար վճարումները կատարել լրիվ ծավալով Հիմնական պայմաններով սահմանվող ժամկետներում:

4.1.2. Վճարել մատուցված հեռախոսային ծառայությունների համար նաև այն դեպքում, երբ Բաժանորդային (վերջնային) սարքավորումը օգտագործվել է այլ անձանց կողմից՝ անկախ այն բանից համաձայնեցվել է Օպերատորի հետ, թե՝ ոչ:

4.1.3. Չփոխանցել սույն պայմանագրի 1-ին բաժնում նշված կապի միջոցներն այլ անձանց (որևէ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա կամ առանց այդպիսի հիմքի), այդ թվում՝ չխախտել Հիմնական պայմանների 5.6. կետի պահանջները:

4.1.4. Կատարել ՀՀ օրենսդրության և Պայմանագրի պահանջները:

4.1.5. Մաքրին և անվնաս վիճակում պահել Օպերատորի կողմից տրամադրված և նրա սեփականությունը հանդիսացող վերջնակետային և/կամ այլ սարքավորումները, դրանց վնասման դեպքում Օպերատորին հատուցելով այդ սարքավորումների արժեքը՝ հաշվի առնելով մաշվածությունը:

4.2. Բաժանորդն իրավունք ունի՝

4.2.1. Հրաժարվել վճարելու այն հեռախոսային ծառայությունների համար, որոնք նախատեսված չեն Պայմանագրով:

4.2.2. Օգտվելու ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով հեռախոսային ծառայությունների ոլորտում սահմանված արտոնություններից:

4.2.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պահանջելու հեռախոսային ծառայությունների համար վճարման վերահաշվարկ կամ այդ ծառայություններից հետագայում չօգտվելու դեպքում՝ վճարված դրամական միջոցների վերադարձ:

4.2.4. Ծառայությունների մատուցման ընթացքում Օպերատորի մեղքով առաջացած թերություններ հայտնաբերելիս պահանջել հեռախոսային ծառայությունների մատուցման կանոնների խախտումների անհապաղ վերացում:

4.2.5. Օգտվել ՀՀ օրենքներով նախատեսված այլ իրավունքներից:

### 5. Կողմերի պատասխանատվությունը և այլ պայմաններ

5.1. Օպերատորն օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Բաժանորդի հանդեպ պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, հեռախոսակապի խափանումները վերացնելու ժամկետները խախտելու համար:

5.2. Բաժանորդը պատասխանատվություն է կրում իր մեղքով հեռախոսակապի բաժանորդային տերմինալի կամ Օպերատորի սեփականությունը հանդիսացող այլ սարքավորումները եւ/կամ/ մալուխները վնասվելու կամ ոչնչանալու դեպքում՝ դրանց արժեքի չափով՝ հաշվի առնելով մաշվածությունը: Ընդ որում՝ սարքավորումների և/կամ/ մալուխների փոխարինման ծախսերը ևս վճարվում/փոխհատուցվում/ են Բաժանորդի կողմից:

5.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Պայմանագրով սահմանված ժամկետների խախտման համար, եթե դրանք տեղի են ունեցել կամ կատարման անհնարինությունն առաջացել է ոչ իր մեղքով:

5.4. Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, եթե դրանք հետևանք են անհաղթահարելի ուժի եւ/կամ/ անկանխատեսելի հանգամանքների (բնական աղետներ, պատերազմներ, ՀՀ նախագահի հրամանագրեր և ՀՀ կառավարության որոշումներ և այլն): Նման դեպքերից որևէ մեկի վրա հասնելու դեպքում, Կողմերն այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնեն միմյանց: Եթե անկանխատեսելի հանգամանքների ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

5.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում բաժանորդային (վերջնային) սարքավորումների անսարքությունների կամ չսերտիֆիկացված վերջնային սարքավորումների օգտագործման հետևանքով հեռախոսակապի խափանումների համար:

5.6. Օպերատորի կողմից հեռախոսային ծառայությունները մատուցվում են (այսինքն՝ հեռախոսահամարները տրամադրվում են) միայն Հայաստանի Հանրապետության /ՀՀ/ տարածքում: Հեռախոսահամարի տրամադրումը ենթադրում է դրա օգտագործումը միայն ՀՀ տարածքում, հակառակ դեպքում Օպերատորն իրավունք ունի միակողմանի, առանց զգուշացման կատարել հեռախոսահամարի անջատում: Սույն կետը չի վերաբերում հեռախոսահամարից զանգերի կատարման ուղղություններին

(այսինքն՝ միջազգային զանգեր կատարելուն):
**5.7.** Պայմանագրով նախատեսված դրույթները խախտող Կողմը պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
**5.8.** Օպերատորի և Բաժանորդի միջև Պայմանագրի առնչությամբ առաջացած վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում Կողմերը գալիս են արբիտրաժային համաձայնության առ այն, որ սույն պայմանագրի շուրջ ծագած բոլոր վեճերի լուծումը, բացառելով ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվելու է Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկին՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքին, ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» համապատասխան: Կողմերը սահմանում են, որ Արբիտրների կազմը ձևավորվում է «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի» համաձայն: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ ք. Երևանը: Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման: Կողմերը տեղեկացվում են, որ ՀԲՄ «Ֆինանսական արբիտրաժի» կանոնադրությանը և «Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին» կարող են ծանոթանալ Հայաստանի բանկերի միության կայքից՝ www.uba.am: Վեճերը լուծվում է Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերի համաձայն:
5.9 Օպերատորը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.10 Սույն պայմանագրի պահանջներին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Օպերատորից գանձվում է տուգանք՝ պայմանագրով նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
5.11 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Օպերատորից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Օպերատորին վճարման ենթակա գումարների հետ:
5.12 Բաժանորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Օպերատորի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.13 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.14 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. Գաղտնիություն**

**6.1.** Օպերատորը պարտավոր է Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, նպատակակետի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները համարել և պահել գաղտնի:
**6.2.** Օպերատորն իրավասու է բացահայտել այդ տեղեկությունները՝
1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ քրեական հանցագործության կամ ազգային անվտանգության նկատմամբ որևէ սպառնալիքի հետախուզման, հետաքննման կամ քրեական հետապնդման առնչությամբ.
2) բաժանորդի գրավոր համաձայնության հիման վրա.
**6.3.** Օպերատորը պատասխանատվություն չի կրում Հիմնական պայմանների 6.1. հոդվածի համաձայն տեղեկությունների բացահայտման հետևանքով պատճառված որևէ վնասի համար:

**7. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. Եզրափակիչ դրույթներ**

**8.1.** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հիմնական և Հատուկ պայմանների ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագրի ամսական ծառայությունների հաշվարկումն ուժի մեջ է մտնում հեռախոսահամարների առաջին միացման հանձման – ընդունման ակտի կնքման օրվանից:
**8.2.** Սույն պայմանագրով նախատեսված դեպքերից բացի պայմանագիրը կարող է լուծարվել նաև Բաժանորդի կողմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Օպերատորին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
8.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Օպերատորը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Օպերատորին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Բաժանորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Բաժանորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Օպերատորի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Օպերատորը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Բաժանորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Բաժանորդի ստացածով:
8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կամ Հատուկ պայմանների հերթական հավելված կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:
2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:
Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Բաժանորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:
8.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Օպերատոր և (կամ) Բաժանորդ) օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ

պայմանագրի կատարման շրջանակում Օպերատորի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Օպերատորը:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից (Հիմնական պայմանները` 7 էջ, Հատուկ պայմանները (Հավելված N3-ի տեսքով)` 1 էջ), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1 և N2 հավելվածները (յուրաքանչյուրը 1-ական էջ) հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

**Բաժանորդի հավաստումը**

**Սույնով հավաստում եմ, որ**

- **ամբողջությամբ ծանոթացել եմ Հիմնական պայմաններին, ընդունում եմ դրանք, տեղյակ եմ բաժանորդի իրավունքներին և պարտականություններին, ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգին և խախտումների հետևանքներին:**
- **Հատուկ պայմանների ստորագրմամբ Պայմանագիրը ուժի մեջ կլինի**

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԱՆՈՐԴ`

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

Աշխատակազմի ղեկավար ______________ Վ.Հարության
/ստորագրություն/ Կ.Տ.

ՕՊԵՐԱՏՈՐ`

«ՔՐՈՍՄՆԵԹ» ՍՊԸ

Տնօրեն` ______________ Վ.Ալեքսանյան
/ստորագրություն/ Կ.Տ.

# ԱԿՏ - 4

## Ծառայության տրամադրման և սարքավորման հանձնման-ընդունման

ք. Երևան

24.01.2019թ.

Սույն ակտը հավաստում է առ այն, որ Բաժանորդը վճարեց գնացուցակով սահմանված միացման գումարը, իսկ Օպերատորն ակտիվացրեց պայմանագրով սահմանված հիմնական հեռախոսային ծառայությունները և հանձնման-ընդունման ակտի միջոցով շահագործման հանձնեց ծառայությունը:

Կողմերի միջև կազմված սույն ակտը հավաստում է նաև առ այն, որ համաձայն N – 5348

Օպերատորի՝
«ՔՐՈՍՍ ՆԵԹ» ՍՊԸ, Տնօրեն.
Վ.Ալեքսանյան
Լիցենզիա՝ № 0516, տրված ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ 18.02.2009թ.
Հասցե՝ ք.Երեւան, Կորյունի 7, բն. 3
ՀՎՀՀ՝ 01834381
Հ/Հ՝ 16048097516001
Բանկ՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Բաժանորդի՝
Անվանում՝ ՀՀ ԱԳԿ կոմիտե
Գլխավոր քարտուղար՝ Գ. Գրիգորյան
Իրավ. հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 7
Հեռ՝
Էլ-փոստ՝ gnumner@cadastre.am
ՀՎՀՀ ՝ 02534328
Հ/Հ՝ 900013220026
Բանկ՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՄԻ ԿՈՂՄԻՑ և

ԵՐԿՈՐԴ ԿՈՂՄԻՑ

Կնքված 20.02.2015թ. հեռախոսային ծառայությունների պայմանագրի, Օպերատորը օգտագործման հանձնեց, իսկ Բաժանորդը ընդունեց հետևյալ սարքավորումը /տտորև՝ «Սարքավորում»/.

| Հ/Հ | Սարքի անվանումը | Չափման միավորը | Գործարանային համար | Սարքի հեռախոսահա մարը | Սարքի Արժեքը դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1. | 2- ելքով երդուղիչ Voptech | 1 Հատ (հավաքածու) | 00:a8:59:e5:d9:76 | 060474130<br>060474242 | 35000 |

Մաշվածությունը ամսական 3 %

Սույնով արձանագրվում է, որ Բաժանորդը պատասխանատու է Սարքավորման առօրյա վիճակի համար: Սարքավորման պատահական կորստի, Բաժանորդի մեղքով խափանման կամ վնասման դեպքում (ինչի հետևանքով հեռախոսային ծառայությունների մատուցումը դարձել է անհնարին կամ թերի) Բաժանորդը պարտավոր է հատուցել Սարքավորման արժեքը՝ Օպերատորից ստանալով մեկ այլ համազոր սարքավորում, որը կարող է օգտագործվել միևնույն նպատակով:

Սույն ակտը կազմված է երկու համազոր բնօրինակից:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՊԵՐԱՏՈՐ

«ՔՐՈՍՍ ՆԵԹ» ՍՊԸ

ԲԱԺԱՆՈՐԴ

ՀՀ ԱԳԿ կոմիտե